«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»։

Մատթեոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Մայիս 2026, N4 (179)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Մայիս 2026թ., N4 (179)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Գրիշա Դարմանյան

Աստծու ծրագիրը յուրաքանչյուրի կյանքում 1

Ինչպես Աստված կանգնեցրեց ժանտախտը 4

Կուռքեր 10

Մահվան դռները գոցվեցին 11

Բժիշկներն ասացին՝ կինդ կմահանա… 12

Աստված ծաղր չի լինում 15

Զորս կարևոր բառերը մահից առաջ 16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:

Էլ. հասցե՝ info@barilur.org

Աստծու ծրագիրը յուրաքանչյուրի կյանքում

Աստված ամեն մեկի հետ ծրագիր ունի, և այդ ծրագիրն այն է, որ Իրեն հավատացողը Հավիտենական Կյանք ունենա: Սիրելինե՛ր, Աստված ընտրել է յուրաքանչյուրիդ: Տեսե՛ք, թե ի՞նչ է ասում Աստված ամեն մեկիս. *«Մեր հայրերուն Աստուածը առաջուընէ քեզ ընտրեց, որպէս զի իր կամքը ճանչնաս ու այն Արդարը տեսնես, և անոր բերնէն ձայն լսես» (Գործք 22:14):* Ուրեմն, որպեսզի օրհնությունը մեզ հետ լինի, պետք է Նրա Կամքը ճանաչենք: Շատերը Աստծու Կամքը չեն ճանաչում ու չեն էլ ուզում ճանաչել, նրանց միակ նպատակն է, որ Աստված իրե՛նց ուզածը կատարի: Ո՛չ, օրհնությունը մեր կյանքի մեջ այդպես չի գալու: Սաղմոս 91-ում Աստված ցույց է տալիս օրհնության ճանապարհը. *«Որովհետև ինծի կը ցանկայ, Անոր համար ես պիտի փրկեմ զանիկա. Անոր ամրութիւն պիտի ըլլամ, Վասն զի անիկա իմ անունս գիտցաւ: Ինծի պիտի կանչէ, ու ես անոր պատասխան պիտի տամ. Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ. Պիտի ապրեցնեմ ու փառաւորեմ զանիկա. Երկայն օրերով պիտի կշտացնեմ զանիկա, Ու իմ փրկութիւնս անոր պիտի ցուցընեմ»* ***(Սաղմ. 91:14-16):*** Տեսե՛ք, թե ի՞նչ խոստումներ է տվել Աստված ամեն մեկիս: Եվ դրա համար ընդամենը մեկ բան է պահանջում մեզանից՝ **«....որովհետև ինծի կը ցանկայ...»:** Սա է մեր առաջնային խնդիրը: Շատերը գալիս են Տիրոջ առաջ, բայց իրենց խնդրածը Տերը չէ, այլ՝ իրենց նյութական ու մարմնավոր հարցերի լուծումը: Երբ Աստված Սողոմոնին հարցրեց՝ ի՞նչ է ուզում, նա խնդրեց՝ տո՛ւր ինձ իմաստուն սիրտ, որպեսզի Քո ժողովրդին ճիշտ դատ անեմ: Բայց կար մեկ այլ անձնավորություն՝ Ոզիան. նա Տիրոջից իմաստություն չի ուզում,զորություն չի խնդրում, այլ ընդամենը՝ *«զԱստուած կը խնդրէր. և Տէրը խնդրած օրերը Աստուած անոր յաջողութիւն կու տար»:* Այսինքն՝

Ոգիային եկած օրհնությունների նախապայմանը մեկն էր՝ զԱստուած կը խնդրէր: Սիրելինե՛ր, ամեն մեկս ունենք դժվարություններ, պրոբլեմներ, հոգսեր: Ու մենք խնդրում ենք ոչ թե Տիրոջը, այլ՝ հոգսերի, խնդիրների լուծումը: Աստված ասում է. *«Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին» (Մատթ. 6:33)*, բայց մենք խնդրում ենք մսացած բաները: Կույր Բարտիմեոսը երբ իմացավ, որ Հիսուսն է անցնում, սկսեց աղաղակել, թեև աշակերտները հանդիմանում ու սաստում էին: Բայց նրան որևէ բան չէր հետաքրքրում. նրան պետք էր միայն Հիսուսը: *«Եւ Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ զանիկա կանչեն. կանչեցին կոյրը ու ըսին անոր, Քաջ եղիր, ելի՛ր, քեզ կը կանչէ: Եւ անիկա իր հանդերձը ձգելով, ելաւ ու եկաւ Յիսուսի» (Մարկ. 10:49-50):*

Եղբա՛յրս, քո՛յրս, Աստված կամենում է, որ դու Իր հետ հաղորդակցվես, կամենում է, որ հասկանաս՝ աղոթքիդ պատասխանը առնելու համար քեզ պետք է ընդամենը մեկ բան՝ Իրեն ցանկանաս: Որովհետև Քրիստոսի մեջ է ուրախությունը, կյանքը և ամեն հարցերի լուծումը: Կարդացե՛ք Ամբակում 3:17-19-ը. *«Թեև թզենին ընձիւղ չտայ...»:* Մարգարեն պատրաստ է սովի, նեղությունների, քանի որ նրա ուրախությունը Տերն է: Աստված մեզ կանչել է, որպեսզի ամեն մեկիս ողորմություն անի: Ու մենք շատ անգամ չենք վստահում Նրա Խոսքին: Սիրելի՛ անմահ հոգի, Աստված, քեզ հետ է: Դու պիտի հավատաս սրան, դու պիտի բացես քո սիրտը:

Ա Թագ.1-ում կարդում ենք Աննայի մասին, որ մեծ խնդիր ուներ: Նա շատ անգամ էր անարգվել իր ամուսնու՝ Եղկանայի երկրորդ կնոջ՝ Փենանայի կողմից, քանի որ զավակ չէր ունենում: Ու հիմա եկել էր Տիրոջ առջև աղոթքով: Նրա աղոթքի հիմքում ընկած էր ոչ թե զավակ ունենալը, որպեսզի Փենանան իրեն չանարգի,այլ՝ *«արու զաւակ մը տաս, զանիկա Տէրոջը պիտի նուիրեմ իր կեանքին բոլոր օրերուն մէջ»*, որպեսզի Տիրոջ տան մեջ մեծանար: Թվում է՝ սովորական վիճակ է: Բայց ո՛չ: Երևի ինքը տեսել էր Հեղիի որդիների ոչ ճիշտ կյանքը և Հեղիի ոչ ճիշտ ծառայությունը: Ու Աննան նպատակադրվել էր՝ զավակը Տիրոջը տալ: Տեսե՛ք՝ այս

ամենի համար Աստված Աննային վարձահատույց եղավ։ *«Եւ Հեղի Եղկանան ու անոր կինը օրհնելով՝ ըսաւ, Տէրը քեզի այս կնոջմէն զաւակներ տայ, Տէրոջը փոխ տրուած տղուն տեղ»։* Աննան երեք տղա և երկու աղջիկ էլ ունեցավ։ Այսօր մենք էլ ենք գալիս Տիրոջ առաջ և շա՛տ աղոթքներ ենք անում։ Ո՞րն է պատճառը, որ մեր աղոթքներին պատասխան չկա։ Հակոբոս 4-ը տալիս է մեր հարցի պատասխանը. որովհետև ձեր ցանկությունների համար եք խնդրում։ Բայց Սաղմոս 91:15-ը ասում է. *«Ինծի պիտի կանչէ, ու ես անոր պատասխան պիտի տամ»։* Ինչու՞. *«որովհետև ինծի կը ցանկայ»։* Ահա՛ թե Աստված երբ կպատասխանի աղոթքներին։ Այն անձնավորությունը, որը հասկացել է և խնդրում ու ցանկանում է Տիրոջը, իր կյանքում կտեսնի բոլոր օրհնությունները։ Թո՛ղ Տերը օգնի, որ ամեն ժամանակ Իր Երեսը փնտրենք։ *«Բայց առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ. վասն զի ան որ Աստուծոյ կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ Աստուած կայ, և թէ վարձահատոյց կ՚ըլլայ անոնց որ զինք կը փնտռեն» (Եբր. 11:6)։* Վարձքի հատուցումը գալիս է այստեղից։ Մովսեսը, իրո՛ք, կարող էր դառնալ Եգիպտոսի երկրորդ կամ անգամ առաջին մարդը, բայց նա *«. . . աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղքին ժամանակաւոր զուարճութիւնը վայելել. Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը. վասն զի դիտելով կը սպասէր վարձքի հատուցումին»* (այսօր մեր շուրջը նույն Եգիպտոսն է)։ Ո՞րն էր Մովսեսի վարձքի հատուցումը. նա հասկացել էր, որ կյանքը ունեցվածքի մեջ չէ։ Ցավոք, շատերը կյանքը տեսնում են այս աշխարհի մեջ։

Սիրելինե՛ր, ուզում եմ, որ ավելի աչալուրջ լինեք, ավելին մտածեք, Աստված ձեզ ոչ թե ժամանակավոր, այլ Հավիտենական Կյանք է խոստացել։ Շատերը մեծ հոգսերով ու դժվարություններով գնում են Տիրոջ առաջ և ամաչելով նույն հոգսերով ու դժվարություններով էլ ետ են վերադառնում։ *«Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու» (Ա Հովի 1:9)։* Աստծու նպատակը սա է, որ

դուք մեղքից ձերբազատված լինեք: Ու տեսե՛ք՝ արդարացումը մեր կյանքում ինչպես է կատարվում. *«Միտքդ ձգէ, մէկտեղ դատի ելլենք. Դուն զրուցէ, որպէս զի արդարանաս» (Եսայա 43:26):* Ասում է՝ դու խոսիր, որպեսզի արդարանաս, չի ասում՝ դու խոսիր, որպեսզի դատապարտվես: Այսինքն՝ խոստովանի՛ր, որպեսզի արդարանաս: Հիշենք փարիսեցու և մաքսավորի առակը՝ Ղուկաս 18:9-14-ում: Փարիսեցին Տիրոջ առաջ եկել էր իր արդարացումով՝ նման չեմ մաքսավորին. զող, ավազակ, խաբեբա չեմ, տասանորդ եմ տալիս, աղոթք եմ անում... Բայց մաքսավորը իր մեղքն էր տեսնում և իր կուրծքն էր ծեծում՝ Ո՛վ Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս: Եվ Աստծու Խոսքն ասում է, որ նա արդարացած գնաց տուն: Խոստովանել՝ նշանակում է մերժել, հրաժարվել մեղքի կյանքից ու ցանկալ Տիրոջը: Եկե՛ք վստահենք Տիրոջը ու հրաժարվենք մեղքից: Ամեն:

Գրիշա Դարմանյան

Դատաստանը կանգնեց

Կարդանք Բ Թագավորաց գրքի 24:1 խոսքը. *«Եւ Տէրոջը բարկութիւնը նորէն Իսրայէլի վրայ բորբոքեցաւ. ու Դաւիթը անոնց դէմ զրգռեց, ըսելով, Գնա, Իսրայէլը ու Յուդան համրէ»:* Դավիթը ցանկանում էր իմանալ, թե ինչքան մարդ կա Հուդայում ու ինչքան մարդ՝ Իսրայելում: Այդ ժամանակ Դավիթը հպարտացել էր և նրան թվում էր, որ այն բոլոր պատերազմները, որոնցում ինքը հաղթանակել էր, իր շնորհքով էր արել և իր բազկի ուժով վաստակել: Դավիթ թագավորը այդ գործը հանձնարարեց իր զորահրամանատար Հովաբին: Հովաբը անմիջապես հասկացավ, որ դա Աստծու առաջ ճիշտ քայլ չի և թագավորին ասաց. *«Եւ Յովաբ ըսաւ թագաւորին, քու Տէր Աստուածդ, ժողովուրդը որչափ որ է, հարիւրապատիկ աւելցնէ, ու իմ թագաւոր տէրոջս աչքերը տեսնեն. բայց իմ թագաւոր տէրս ինչո՞ւ համար այս բանին կը ցան-*

կայ» (24:3): Հովաբը հասկանում էր, որ թագավորը ինքը չի վարել այդ պատերազմն ու հաղթել: Բայց քանի որ իր խոսքը թագավորի սրտին դուր չեկավ, նա ստիպված հնազանդվեց այդ հրամանին. *«Ու երբ թագաւորին խօսքը Յովաբի ու զօրավարներուն վրայ սաստկացաւ, Յովաբ զօրավարներուն հետ թագաւորին առջեւէն ելաւ, որպէս զի Իսրայէլի ժողովուրդը համրէ» (24:4):*

Մարդահամարի ողջ գործընթացը տևեց 9 ամիս ու 20 օր: Նա իր գործը ներկայացրեց թագավորին, որ 800000 Իսրայելի մեջ սուր քաշող մարդ կա և 500000 մարդ՝ Հուդայում: Հաջորդ՝ 10-րդ խոսքում կարդում ենք. *«Եւ Դաւիթ ժողովուրդը համրելէն ետքը՝ իր խղճմտանքը զինք դրդեց. ու Դաւիթ Տէրոջը ըսաւ, Զայս ընելով մեծ մեղք գործեցի. ով Տէր, հիմա քու ծառայիդ այս մեղքը ներէ. քանզի մեծ յիմարութիւն ըրի»:* Թագավորն հասկացավ իր սխալը, որ հպարտությունից դրդված արեց այդ քայլը: Երբ կարդում ենք Ա Մնացորդաց 21:1 համարը, տեսնում ենք, որ թագավորն այդ ամենն արել էր սատանայի դրդումով. *«Եւ Սատանայ Իսրայէլի դէմ ելաւ, ու Դաւիթը դրդեց որ Իսրայէլը համրէ»:*

Երբ դիտարկում ենք այս երկու հատվածները, տեսնում ենք, որ առաջին հատվածում գրված է, որ Աստված գրգռեց, իսկ երկրորդ հատվածում՝ սատանան: Սրանք իրար չեն հակասում, որովհետև մենք գիտենք, որ սատանան կատարող է. Աստված ինչ որ հրամայի՝ նա պիտի կատարի: Այս հարցում էլ Աստված Ինքն էր հեղինակը և սատանայի միջոցով գրգռեց ու Իսրայելը համրելու գնաց:

Սիրելինե՛ր, մենք տեսնում ենք, որ երբ Դավիթը հասկացավ իր սխալը, նա Տիրոջն ասաց՝ «մեծ մեղք գործեցի». ոչ թե մեղք, այլ՝ մեծ մեղք: Այսինքն՝ հպարտությունից առաջացած մեղքը մեծ մեղք է: Կարող է մարդը մարմնավոր տկարանա և որոշ սխալներ անի, դա ուրիշ բան է, բայց եթե մարդը հպարտությունից դրդված է մեղք գործում՝ մեծ մեղք է:

Հաջորդ օրվա առավոտյան, Գադ տեսանողի միջոցով Տիրոջ Խոսքը հայտնվեց Դավթին. *«Եւ Գադ Դաւիթի գալով՝ անոր պատմեց, ու անոր ըսաւ, Եօթը տարի քու երկրիդ վրայ սո՞վ ըլլայ, կամ երեք ամիս քու թշնա-*

միներուդ երեսէն փախչի՞ս, ու անոնք քեզ հալածեն, կամ թէ երեք օր քու երկրիդ վրայ ժանտա՞խտ ըլլայ. հիմա մտածէ ու տես թէ ի՛նչ պատասխան տանիմ զիս ղրկողին» (24:13): Եվ տեսե՛ք, թե ինչ ընտրություն կատարեց Դավիթը. *«Եւ Դաւիթ Գադի ըսաւ, Խիստ մեծ նեղութեան մէջ եմ. հիմա Տէրոջը ձեռքը իյնանք, քանզի անոր գթութիւնը շատ է, ու մարդու ձեռք չիյնամ» (24:14):* Դավիթն ընտրեց Տիրոջ ձեռքն ընկնելը, «քանզի անոր գթութիւնը շատ է»: Դավիթը շատ մեծ հավատք ուներ Տիրոջ նկատմամբ, Նրա ողորմության ու շնորհքի վրա: Եվ դրա համար էլ Գործք առաքելոց գրքի 13:22 համարում ասվում է. *«Յեսսէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ»:* Այդ մասին է խոսում նաև 36 սաղմոսի 5-րդ խոսքը. *«Ով Տէր, քու ողորմութիւնդ մինչև երկինք կը հասնի, Ու քու ճշմարտութիւնդ՝ մինչև ամպերը»:* Այս խոսքում նշված չափերը չեն նշանակում, որ Աստծու ողորմությունն ու ճըշմարտությունն իրար զիջում են, այլ՝ որ առաջ Աստծու ճշմարտությունն է կատարվում, հետո միայն հասնում է Աստծու ողորմությունը:

Այս մասին շատ տեղերում է գրված, հարկ չկա բոլորը ներկայացնելու, ուղղակի իմանանք, թե Դավիթն ինչքա՛ն վստահում ու հավատում էր Աստծու ողորմությանը:

Երբ ուշադրությամբ նորից կարդում ենք Գադ մարգարեի խոսքերը, տեսնում ենք, որ յոթ տարվա սովը նույնպես Աստծու ձեռքն ընկնել էր նշանակում: Ինչո՞ւ Դավիթն ընտրեց երեք օրվա ժանտախտը: Սիրելինե՛ր, յոթ տարվա սովի ժամանակ էլի Աստծու ձեռքն էր ընկնելու, բայց սովի ժամանակ աղքատները նույնիսկ մեկը մյուսին կարող էին ուտել, այսինքն՝ մարդը նորից մարդու ձեռքը կընկներ: Այդպիսի մի դեպքի մասին է գրված Դ Թագավորաց 6:28 խոսքում. *«Եւ անիկա ըսաւ, Այս կինը ինծի ըսաւ որ Քու տղադ տուր, ու այսօր զանիկա ուտենք, և իմ տղաս վաղը ուտենք»:* Դրա համար Դավիթն ընտրեց երրորդը, որովհետև համոզված էր, որ Տիրոջ գթությունը շատ մեծ է:

«Եւ Տէրը այն առաւօտէն մինչև որոշուած ժամանակը Իսրայէլի վրայ ժանտախտ ղրկեց. ու Դանէ մինչև Բէրսաբէէ ժողովուրդէն եօթանասուն հազար

մարդ մեռաւ» (24:15): Դանից մինչև Բերսաբե՝ նշանակում է ողջ Իսրայելը: Հաջորդ համարում կարդում ենք. *«Եւ Աստուծոյ հրեշտակը ձեռքը Երուսաղէմի վրայ երկնցուց որպէս զի զանիկա ջնջէ. ու այս չարիքին վրայ Տէրոջը սիրտը իջաւ, ու ժողովուրդը ջնջող հրեշտակին ըսաւ, Հերիք է, ալ ձեռքդ քաշէ. ու Տէրոջը հրեշտակը Յեբուսացի Ոռնայի կալին քով էր»:* Տեսե՛ք, սիրելինե՛ր, ժանտախտից յոթանասուն հազար մարդ մեռավ, բայց երբ կործանող հրեշտակը հասավ Երուսաղեմ, Տերը կանգնեցրեց: Սա նշանակում է, որ Տերը սահման ունի, և այդ սահմանից այն կողմ ոչ ոք չի կարող անցնել: Հրեշտակը հասել էր Հեբուսացի Ոռնայի կալի մոտ: Ովքե՞ր էին Հեբուսացիները... կարդանք Ծննդոց գրքի 15-16 խոսքերը. *«Եւ Քանան ծնաւ իր անդրանիկը Սիդոնը, նաև Քետը, Յեբուսացին, Ամօրհացին, Գերգեսացին. . . »:* Դրանք քանանի սերունդից էին, որոնք տեղաբնակներ էին, քանի որ Երուսաղեմն առաջ կոչվում էր Հեբուս: Դավիթն այդ քաղաքը գրավելուց հետո անվանափոխեց և կոչեց Երուսաղեմ, այսինքն՝ «խաղաղության քաղաք»: Այդ Հեբուսի բնակիչներից դեռ կային, որ ապրում էին այդտեղ, որոնցից մեկն էլ Ոռնան էր:

Երբ Դավիթը տեսավ, որ այդքան մարդ մեռավ՝ ասաց Տիրոջը. *«Ահա ե՛ս մեղանչեցի ու ե՛ս անօրէնութիւն ըրի, բայց այս ոչխարները ի՞նչ ըրին. կ'աղաչեմ, քու ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ ըլլայ» (24:17):* Հեշտ է այսպես ասելը, բայց Դավիթն ուներ հովվի սիրտ, ու այն ցավեց ու անհանգստացավ այդ ժողովրդի համար, ընդունեց իր մեղքը և խորը զղջաց: Մեծ էր Դավիթի սերը Իսրայելի ժողովրդի նկատմամբ: Հաջորդ համարում կարդում ենք. *«Եւ նոյն օրը Գադ Դաւիթի եկաւ, ու անոր ըսաւ, Ելիր, Յեբուսացի Ոռնայի կալին մէջ Տէրոջը սեղան մը կանգնէ»,* որպեսզի այնտեղ խաղաղության զոհեր մատուցի Տիրոջը:

«Եւ Դաւիթ Գադի ըսածին համեմատ վեր ելաւ, ինչպէս Տէրը պատուիրեր էր: Ու Ոռնա նայեցաւ, ու երբ տեսաւ որ թագաւորը և անոր ծառաները իրեն կու գան, Ոռնա ելաւ ու երեսը մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ թագաւորին: Եւ Ոռնա ըսաւ, Արդեօք ի՞նչ պատճառաւ իմ թագաւոր տէրս իր ծառային եկաւ: Ու Դաւիթ ըսաւ, Այս կալը քեզմէ

ծախու առնելու, ու Տէրոջը սեղան մը շինելու համար, որպէս զի ժողովուրդին վրայէն հարուածը վերնայ» (24:19-21): Ռոնան իր կալը սիրով թագավորին ձրի առաջարկեց, բայց ի՞նչ ասեց Դավիթը. *«Ոչ. հապա ես զանոնք քեզմէ անշուշտ ստակով ծախու պիտի առնեմ, ու ձրի առածս իմ Տէր Աստուծոյս ողջակէզ պիտի չմատուցանեմ: Եւ Դաւիթ կալը ու եզները յիսուն սիկղ արծաթի ծախու առաւ»:* Այստեղ գրված է հիսուն սիկղ, բայց Ա Մնացորդաց 21:25-27-ում այդ մասին գրված է. *«Ու Դաւիթ այն տեղին համար կշիռքով վեց հարիւր սիկղ ոսկի տուաւ Ռոնայի: Եւ Դաւիթ հոն Տէրոջը սեղան շինեց, ու անոր վրայ ողջակէզներ ու խաղաղութեան զոհեր մատուց, և Տէրոջը աղաղակեց. ու երկինքէն կրակով ողջակէզի սեղանին վրայ անոր պատասխան տուաւ: Եւ Տէրը հրեշտակին խօսեցաւ, ու անիկա սուրը իր պատեանը դարձուց»:* Ինչո՞ւ է մի տեղ գրված հիսուն սիկղ արծաթ, իսկ մյուսում՝ վեց հարյուր սիկղ ոսկի: Բանն այն է, որ Դավիթը հիսուն սիկղը վճարել է այդ մի փոքր տեղի համար, որտեղ պետք է կանգնեցներ զոհասեղանը, բայց հետո երբ կարդում ենք, հասկանում ենք, որ թագավորը ոչ միայն այդ կալն առավ, այլև ողջ կալվածքը, որի մեջ մտնում էր նաև Մորեայի լեռը, որտեղ Աբրահամն իր որդի Իսահակին տարավ զոհելու: Նույն այդ Ռոնայի կալվածքի տեղում կառուցվեց Սողոմոնի տաճարը: Այդ պատճառով է վճարած գումարների միջև նշված այդ հսկայական տարբերությունները:

Սիրելինե՛ր, շատ կարևոր միտք ասաց Դավիթը, երբ պատասխանեց Ռոնայի առաջարկին. *«...ձրի առածս իմ Տէր Աստուծոյս ողջակէզ պիտի չմատուցանեմ»:* Երբ որևէ բան ես զոհաբերում Տիրոջը, պետք է այն գին ունենա, այսինքն՝ զոհը պետք է արժեք ունենա: Արդյունքը եղավ այն, որ երբ Դավիթը զոհը մատուցեց, Աստված այն ընդունեց, և ժանտախտը դադարեց:

Սա շատ խորը հոգևոր իմաստ ունի՝ պատիժը կանգնում է զոհով: Մեղքը բերում է դատաստանի, բայց զոհը կասեցնում է դատաստանը: Ինչպես որ Դավիթը մատուցած զոհով կանգնեցրեց դատաստանը, այնպես էլ Քրիստոս, զոհ դառնալով, կանգնեցրեց Ադամի մեղքի պատճառով ողջ մարդկության

գլխին կախված դատաստանը: Մարդկությունը պիտի մեռներ ու գնար կորսվեր, բայց Քրիստոս զոհով կանգնեցվեց այդ դատաստանը:

Հետաքրքիր է, հիմա մենք ի՞նչ պիտի զոհենք: Այդ մասին կարդում ենք Սաղմոսների գրքում. *«Շնորհակալութիւն զոհէ Աստուծոյ, Ու քու ուխտերդ կատարէ Բարձրելոյն» (50:14):* Հեշտ է շնորհակալություն հայտնել, երբ քո կյանքում ինչ-որ լավ բան է կատարվում, բայց՝ եթե փորձության մեջ ես, կարո՞ղ ես շնորհակալություն հայտնել Տիրոջը: Եթե կարող ես, ուրեմն դա Տիրոջից տրված զորությամբ ես հայտնում: Աստծուն հաճելի զոհը կոտրած հոգին է. *«Աստուծոյ զոհը կոտրած հոգին է. կոտրած ու խոնարհ սիրտը, ով Աստուած, դուն չես անարգեր» (51:17):*

Սիրելինե՛ր, մարդու սիրտը կոտրվում է, երբ նա ընդունում է Աստծու Խոսքը: Այդ խոսքն սկսում է աշխատանք տանել մարդու սրտի հետ, ու այն հըպարտ, չար մարդը դառնում է կոտրած սրտով մեկը: Թո՛ղ մեր սրտերը կոտրվեն, սիրելի՛ ժողովուրդ, հավատանք, որ ինչպես Դավիթի զոհով կանգնեցվեց Իսրայելի ժողովրդի պատիժը, այնպես էլ Քրիստոսի զոհով կանգնեցվեց ողջ մարդկությանն սպառնացող դատաստանը: Սա մենք ասում ենք ընդհանուր աշխարհի համար, բայց ամեն մեկը թող հասկանա, որ մեղքի պատճառն ինքն է, ու Հիսուսի զոհով ի՛ր, անձամբ ի՛ր դատաստանն է կանգնեցվել:

Սիրելինե՛ր, այդ վայրում կատարված զոհով կանգնեցվեց մահաբեր ժանտախտը, և այդ նույն վայրում հետագայում կանգնեցվեց Սողոմոնի տաճարը: Ասում են, որ այդտեղ են թաղված մեր նախահոր՝ Ադամի ոսկորները, և այդտեղ խաչվեց մեր սիրելի Հիսուսը, և նրա թափած արյունն առաջինը հոսեց հենց Ադամի ոսկորների վրա:

Հիմա, եթե մեր կյանքում կան անեծքներ, դժվարություններ, ի՞նչ պետք է անենք: Ինչպես որ Դավիթն ընդունեց իր մեղավորությունն ու ապաշխարեց, ուրիշին երբեք չմեղադրեց, այնպես էլ մենք՝ ընդունենք մեր մեղավոր լինելը, զղջանք և ապաշխարենք այն Խոսքով, որը մեզ հանձնվեց մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի ձեռքով: Այլապես չենք կարող մտնել այն սուրբ քաղաքը, որի ճարտարապետը մեր Տերն է:

ԿՈՒՌՔԵՐ

Ուսումնասիրելով Սուրբ Գիրքը՝ կարելի է տեսնել մի օրինաչափություն, որ Աստված մարդու հետ կապված մի մեծ խնդիր է ունեցել՝ կռապաշտությունը: Այդ մասին հիշվում է Աստվածաշնչի վաթսունվեց գրքից երեսուներկուսում՝ սկսած Ելից գրքից մինչև Հայտնություն: Մարդու մտքով երբեք չի էլ անցնի, որ Սուրբ Գրքում այդքան մեծ ուշադրություն է դարձվում կուռքերի թեմային: Երկար ու ձիգ դարերի ընթացքում՝ Հին կտակարանի համարյա բոլոր գրքերում և մինչև Նոր կտակարանի վերջին գիրքը, հանդիպում ենք Աստծու կողմից զգուշացման, կոչի, հիշեցման՝ այն մասին, որ մարդը պետք է զգուշանա կռապաշտությունից: Բայց խնդիրը չէր լուծվում կամ լուծվում էր ժամանակավորապես՝ գալիս էր մի թագավոր և ոչնչացնում էր բոլոր կուռքերն ու կռատները, բայց նրանից հետո գահին բազմողը ամեն բան վերականգնում էր, և ժողովուրդը դառնում էր կռապաշտության: Այդ խնդիրը հասել է մեր օրեր: Պարզ դառնալու համար եկե՛ք հիշենք, թե ինչ է կուռքը, ուշադիր խորհենք և մի անգամ ևս ստուգենք ինքներս մեզ:

Կուռք է համարվում այն ամենը, ինչը մարդու սրտում գրավում է Աստծու տեղը, ինչը թանկ է Նրանից, որոշում է կյանքի նպատակը, նույնականացումը, ձևավորում է ժամանակի առաջնահերթությունները, հանդիսանում է անվտանգության և էմոցիոնալ կայունության աղբյուր, և ինչը մարդը սիրում է Աստծուց շատ:



Կուռքն այն է, առանց ինչի մարդն ապրել չի կարող, ինչից նա կախված է, և ինչն ավելի հետաքրքիր է, քան Աստված: Քննենք մեր սրտերը և ե՛տ կանգնենք սխալ քայլերից, քանի դեռ ժամանակ ունենք:

Սահվան դռները գոցվեցին

Այն, ինչ պատմում եմ, կատարվել է ինձ հետ: 1998 *թվի ամռան մի օր առավոտ վաղ Տերը արթնացրեց. «Վե՛ր կաց, Գառնիկ անունով զավակս գալիս է քեզ մոտ: Նա հիմա այն ճանապարհով է անցնում, որով դու արդե՛ն անցել ես»: Ու միանգամից մոտ* 25 *տարեկան մի երիտասարդի դեմք հայտնվեց աչքերիս առջև: Հետո իմացա, որ երիտասարդը ինքնասպանության փորձ էր կատարել հենց այդ գիշեր (այդ ճանապարհի մասին էր խոսքը), ու Աստված կանխել էր: Վեր կացա, ամուսնուս էլ արթնացրի, պատրաստվեցի «Հյուր» ընդունելու: Ուղիղ* 8:00*-ին դուռը թակեցին: Գեղեցիկ ու բարետես մի երիտասարդ էր (նույն երիտասարդը, որին Աստված ցույց էր տվել տեսիլքով): Ներս հրավիրեցի: Անունս և բնակարանիս հասցեն Տերն էր հայտնել նրան: Սկզբում շատ զարմացած էր, որ այդ ժամին անծանոթ մեկին ընդունում եմ ջերմ ժպիտով: Ասացի, որ արդեն սպասում էի իրեն, որ իր մասին Տերը հայտնել էր մինչ իր գալը: Նստեցինք: Երիտասարդը սկսեց պատմել: Ամուսինս էլ էր լսում մեր զրույցը:*

- Գիշերվա 3:00*-ից սպասում եմ, որ լույսը բացվի, ու գամ Ձեզ մոտ,- հուզված սկսեց նա: - Ես հայտնվել եմ շատ մեծ ու ինձ համար անլուծելի խնդիրների մեջ (հետախուզման մեջ էր ՌԴ կողմից): Այլևս ելք չէի տեսնում, ու միակ ելքը այս աշխարհից հեռանալն էր: Արդեն բոլորովին հուսահատ՝ լսում եմ,որ ինչ-որ մեկը ձախ ականջիս փսփսում է. «Քեզ ցա՛ծ նետիր շենքի կտուրից, կգաս ինձ մոտ ու փրկություն կգտնես»: Նա ինձ համոզեց, և ես լսեցի նրան: Բարձրացա* 9 *հարկանի շենքի տանիք, ու հանկարծ աջ կողմիցս լսում եմ շա՛տ խաղաղ մի ձայն. «Գառնի՛կ, մի՛ արա, կա՛նգ առ»: Ցնցվեցի: Ձայնը նորից խոսեց. «Կգնաս այս հասցեով. Ես այնտեղ զավակ ունեմ. նա քեզ կասի՝ ինչ անես»: Ես ցած իջա: Անհամբեր սպասում էի լուսաբացին: Ու հիմա Ձեզ մոտ եմ:*

Ես լսեցի երիտասարդին: Կյանքիս դառն էջերը նորից վերապրեցի, տխուր հիշողություններս արթնացան կրկին: Ասացի, որ ես էլ եմ նման ճանապարհ անցել, և Աստված է ինձ հայտնվել ու կանխել իմ

ճակատագրական սխալը. Նա ինձ անունով կանչեց. «Մի՛ սխալվիր, մի՛արա, Ես քեզ հետ գործեր ունեմ»: Ու ես ետ կանգնեցի իմ որոշումից (այդ միտքը ինձ չարն էր տվել, ինչպես որ Գառնիկին): Հետո սկսեցի վկայել Աստծու մասին: Նա անտեղյակ էր Ամենազոր Տիրոջ Խոսքից: Անտեղյակ էր նաև չարի նենգություններից: Մեր զրույցը տևեց մոտ մեկ ժամ: Խորհուրդ տվեցի, որ այցելի եկեղեցի: Նա համաձայնեց, և հենց առաջին իսկ կիրակին միասին գնացինք եկեղեցի: Եղբայրները նրա համար աղոթեցին: Անցել են տարիներ: Հիմա նա ՌԴ-ում է, ամուսնացել է, ունի երեք երեխա: Փառք Տիրոջը, որ չարի ճիրաններից փրկեց ևս մեկին:

Վկայությունը՝ Հ. Սահակյանի

Բժիշկներն ասացին՝ կինդ կմահանա...

Վկայում է 14 երեխաների հայրը՝ Անդրեյ Բորիշնիկով, «Церковь Вефиль»

Ծնվել, մեծացել եմ հավատքի ընտանիքում, կարդացել եմ Սուրբ Գիրքը, ճանաչել եմ Աստծուն... Բայց այն, ինչ կատարվեց իմ ընտանիքում երեք տարի առաջ, ինձ ստիպեց այլ աչքերով նայել Աստծուն և առավել վստահել Նրան: Աստված երբեք չի փոխվում, ու Նրա Սերը անսահման է մեր հանդեպ: Ունեմ 14 երեխա, և ամեն երեխայի հետ բժիշկները կնոջս ահաբեկում էին. «Դու չես հաղթահարի, դու չես ապրի...»: Կինս սրտի լուրջ խնդիր ուներ: 14-րդ հղիությունն էր՝ շատ դըժ-

վարություններով: Մի գիշեր ինձ արթնացրեց. ուղղակի շնչահեղձ էր լինում, խեղդվում էր, օդը չէր հերիքում: Աղոթեցինք, մի քիչ կարգավորվեց: Նոյեմբերի 25-ին կնոջս տարա կլինիկա՝ հերթական այցի: Ներս տարան, ու երկար ժամանակ դուրս չէր գալիս: Հետո գրեց. «Ինձ տանում են հիվանդանոց»: Նրա վիճակը շատ էր ծանրացել: Գնացի տուն՝ կնոջս անհրաժեշտ իրերը պատրաստելու: Անդադար աղոթում էի: Հետո նորից նամակ եկավ հեռախոսիս. «Ինձ տանում են վերակենդանացման բաժանմունք»: Վատ կանխազգացում ունեցա, վախեցա: Զանգահարեցի եկեղեցիներ՝ տարբեր երկրների, քաղաքների, խնդրեցի աղոթել: Գիտե՞ք, նման իրավիճակներում սատանան կողքիդ է ու անվերջ փսփսում է. «Դե՛, հիմա կմնաս 13 երեխաներիդ հետ մենակ, կինդ մահանում է...»: Արցունքներս հոսում էին հեղեղի պես (վկայության ողջ ընթացքում ևս): Ճի՛շտ է, գրված է. «Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէք, երբ կերպ-կերպ փորձանքներու մէջ կ'իյնաք» (Հակոբու 1:2), բայց դա այդքան հեշտ չէ: Ամբողջ ճանապարհին ես աղոթում էի, կանչում Տիրոջը, ողբում, աղաղակում, աղերսում: Միակ ապա-

վենս Աստված էր, ու իմ ներսում Նրա Խոսքն էր. *«Ինձի կանչէ, ու քեզի պատասխան տամ, և քեզի մեծ ու խորին բաներ պատմեմ, զորոնք դուն չես գիտեր» (Երեմ. 33:3):* Մեկ ժամից հիվանդանոցում էի: Վիրահատել էին ու տարել քաղաքային վերակենդանացման հիվանդանոց: Դա 15-րդ հիվանդանոցն է Մոսկվայում: Այն ունի առանձին բաժանմունք՝ շատ մեծ, որտեղ չորս հարկը միայն վերակենդանացման բաժնին է հատկացված: Մեծ դժվարությամբ ինձ հաջողվեց պարզել, թե կինս և երեխաս որտեղ են: Ներս մտնել հնարավոր չէր (ինձ հայտնեցին բժշկի դուրս գալու ժամը): Կնոջս տարել էին ամենածանր հիվանդների բաժին: Ե՛վ նա, և՛ փոքրիկը շատ ծանր վիճակում էին: Իսկ սատանան չէր դադարում ինձ իր մտքերը մատուցել. կինդ մինչև առավոտ չի ապրի: Մեծ դժվարություններով մի կերպ հանդիպեցի բժշկին: Նա ինձ ասաց. «Չգիտեմ՝ մինչև առավոտ կապրի՞ արդյոք»: Սատանան էլի ինձ հանգիստ չէր թողնում: Բայց ես շարունակում էի աղոթել: Չեմ կարող ասել՝ ի՞նչ կկատարվեր ինձ հետ, եթե Աստծուն չճանաչեի: Իմ հույսը միայն Նա էր (այդ ժամանակ մեր մեծը 20 տարեկան էր, փոքրը՝ մոտ 1): Ինձ համար շատ դժվար էր: Կինս վերակենդանացման բաժնում մնաց վեց օր, և այդ օրերի ընթացքում բժիշկների խմբեր էին այցելել նրան՝ ուղղակի տեսնելու Աստծու անհավանական հրաշքը. նման բան նրանք երբևէ չէին տեսել: Բժշկության բոլոր օրենքների համաձայն՝ կինս պետք է մահանար: Հիվանդությունը, որն ախտորոշել էին, խիստ վտանգավոր էր. այդ մասին կարդացի համացանցում. «Հանկարծակի մահ՝ ցանկացած պահի»: Երկու շաբաթից կինս ու մեր փոքրիկ դստրիկը տանն էին: Նրա սրտի խնդիրը դեռ անհանգստացնում էր: Մեզ առաջարկեցին սրտի վիրահատություն և բացատրեցին՝ մահ կամ ողջ կյանքը՝ դեղահաբերով: Նորից լուրջ ընտրության առջև էինք. ոչ մի երաշխիք չկար: Անցնում էին շաբաթները: Մի օր ուղղակի հրաշք կատարվեց. կինս շոգեբաղնիքի վերին նստարանին մնաց տասը րոպե: Դա, իրոք, հրաշք էր. մինչ այդ նույնիսկ ներքևում անգամ մեկ րոպե չէր կարող դիմանալ: Մի քանի օրից

գնաց սրտաբանի մոտ: Հետազոտությունից հետո բժիշկը հայտարարեց. «Ձեր սիրտը կատարյալ առողջ է»: Աստված մեծ ողորմություն էր արել մեզ:

Ծննդաբերությունից երկու ամիս անց հեռախոսիս զանգ եկավ. վերակենդանացման բաժնի բժիշկն էր՝ վախեցած, դողացող ձայնով. «Ի՞նչ կա Լյուդմիլա Իվանովնայից...»: Նա մտածում էր՝ կինս արդեն մահացած է:

- Կողքս նստած է,- ուրախ ասացի ես:

- Փոխանցի՛ր հեռախոսը,- բղավեց ականջիս մեջ. երևի ցնցումը մեծ էր:

Նրանք երկար զրուցում էին:

Բժիշկները գրեթե համոզված էին, որ նա կմահանա, բայց Աստծու ծրագիրը մեզ համար այլ էր: Երեք տարի է անցել: Մեր աղջնակը երեք տարեկան է, կինս՝ առողջ:

«Ինձի կանչէ, ու քեզի պատասխան տամ, և քեզի մեծ ու խորին բաներ պատմեմ, զորոնք դուն չես գիտեր» (Երեմիա. 33:3): Մենք կանչեցինք, Նա պատասխան տվեց: Փա՛ռք Տիրոջը:

Անդրեյ Բորիշնիկով,
«Церковь Вефиль»

ԱՍՏՎԱԾ ԾԱՂՐ ՉԻ ԼԻՆՈՒՍ

Ջորջ Ֆորբսը չէր հավատում Ավետարանին և հաճախ ծաղրում էր Ուայթֆիլդի քարոզները: Նա իր ընկերների հետ լսել էր, թե ինչպես է Ուայթֆիլդը մեծ բազմությունների առաջ քարոզում, և թե ինչպես են մարդիկ հուզվում նրա խոսքերից: Այդ ամենը նրան ծիծաղելի էր թվում:

Մի օր նա որոշեց ծաղրել քարոզչությունը: Ընկերների առաջ վերցրեց Աստվածաշունչը, բացեց Ղուկասի ավետարանը և ասաց, որ հիմա ինքը «կքարոզի այնպես, ինչպես Ուայթֆիլդը»:

Նա սկսեց բարձրաձայն կարդալ և ծաղրանքով արտա-

սանել խոսքերը՝ փորձելով ընդօրինակել քարոզչի ձայնը։ Բայց երբ հասավ այն խոսքերին, որտեղ խոսվում է Քրիստոսի խաչի և մեղավորների փրկության մասին, ինչ-որ բան փոխվեց։ Աստվածաշնչի խոսքերը սկսեցին ազդել նրա խղճի վրա։ Նա կանգ առավ կարդալու ընթացքում։ Այն, ինչ նա սկսել էր կատակով, հանկարծ դարձավ լուրջ։ Նրա ձայնը դադարեց ծաղրական լինելուց։ Նա շարունակեց կարդալ, բայց արդեն զգում էր, որ այդ խոսքերը վերաբերում են իր սեփական մեղքին և իր վիճակին Աստծու առաջ։

Վերջում նա այլևս չկարողացավ շարունակել «ծաղրական քարոզը»։ Նրա սիրտը խոցվեց, և հենց այդտեղ նա ապաշխարությամբ ընդունեց Ավետարանը և դարձի եկավ Քրիստոսին։

«Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ, և ամէն երկսայրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու ոգին և յօդուածները ու ծուծը բաժնելու, և կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունքները» (Եբր. 4:12)։

ՉՈՐՍ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՌԵՐԸ ՄԱՇԻԾ ԱՌԱՋ

«...որովհետեւ մորթուեցար, եւ քո արիւնովը մեզ գնեցիր Աստուծոյ համար» (Հայտնություն 5:9)։

Երբ Չարլզ Սպերջենը մահանում էր, ասաց. «Իմ ամբողջ աստվածաբանությունը կարող եմ ամփոփել չորս բառերով. «Նա մահացավ ինձ համար»»։

Եթե մեզ ինչ-որ բան էլ անհրաժեշտ լինի հավիտենություն անցնելու համար, ապա, իհա՛րկե, դա չի լինի Աստծու գործում հերոսությունների ցանկը, ոչ էլ այն, թե որքա՛ն հիանալի էինք լուծում բարդ հարցերը։ Այն ամենը, ինչ մեզ պետք կգա, փրկագնումն է, ավելի ճիշտ՝ ոչ թե ինչ, այլ Ով Փրկիչը։

Երբ կանգնենք մահվան առաջ, ամենակարևորը կլինի ոչ թե մեր արժանիքների հաշիվը Աստծու առջև, այլ այս չորս բառերը՝ «Նա մահացավ ինձ համար»։

ՍԻՐԵԼԻ՛ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Աստված սիրում է ձեզ և ուզում է, որ դուք հավատաք Իրեն ու փրկություն ունենաք: Այդ մասին կարդում ենք **Հովհաննու 3:16**-ում. *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա՝ չկորչի այլ հավիտենական Կյանք ունենա»:* Եթե դուք ուզում եք ավելին լսել ու իմանալ Աստծո և Նրա Խոսքի մասին, կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարներով.

ԵՐԵՎԱՆ

Ավան	093 81-31-53	Մալխասյան Օնիկ
Զեյթուն	055 66-82-06, 099 66-82-06	Այդինյան Լևոն
Էրեբունի	093 53-43-68	Բարսեղյան Մնացական
Կենտրոն	094 84-35-04	Պետրոսյան Հայկ
Կոմիտաս	093 26-20-72	Ալավերդյան Սարգիս
ՀԱԹ (Բանգլադեշ)	055 72-28-12	Հովհաննիսյան Գևորգ
ՀԱԹ (Բանգլադեշ)	093 38-12-42	Ղազարյան Արտուշ
Նորքի զանգված	099 87-38-88, 077 87-38-80	Ղազարյան Սիարոն
Նորքի զանգված	091 16-49-45	Անտոնյան Արթուր
Շենգավիթ, Չարբախ	077 55-57-55	Ամիրջանյան Արմեն
Աջափնյակ	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Քանաքեռ	093 53-25-26	Ամիրբեկյան Հրահատ
3-րդ մաս	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ

ՇՐՋԱՆՆԵՐ

Աբովյան	094 91-44-53	Ջամալյան Գևորգ
Ալավերդի	094 30-80-40	Դավոյան Վալերի
Աշտարակ	098 01-72-60	Մկրտչյան Անդրանիկ
Ապարան	093 77-06-70, 071 77-06-70	Գասպարյան Միշա
Արարատ	094 20-60-36	Ներսիսյան Նորիկ
Արթիկ	077 70-28-38	Փիլոյան Պողոս
Արմավիր	091 75-99-20	Մխիթարյան Ռադիկ
Արմավիր	093 19-52-04	Մարկոսյան Վրեժ
Արտաշատ	093 72-48-88	Համբարձումյան Վաչագան
Արտաշատ (գյուղերը)	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Արտաշատ (Ազատավան)	077 28-75-91	Սամվելյան Պերճ
Արցախ	094 00-94-08	Մարդյան Սիեր
Գավառ	093 68-84-92	Մանուկյան Վարուժան
Դիլիջան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Եղեգնաձոր	077 40-26-24	Մարտիրոսյան Արզուման
Զորավան, Եղվարդ	098 85-05-02, 091 24-53-60	Մկրտչյան Մասիս
Զանգեզուր	094 00-94-08	Մարդյան Սիեր
Էջմիածին	093 18-75-30	Սուկաչ Էդիկ
Իջևան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Հրազդան	094 22-33-15	Օհանյան Աշոտ
Ճամբարակ (Կարմիր)	093 18-77-33	Սահակյան Սասուն
Մասիս	091 71-62-64, 093 71-62-64	Հարությունյան Մելսիկ
Մարտունի	093 86-30-13	Արշակյան Մելիք
Նոյեմբերյան	094 92-01-90	Նավասարդյան Ռուբեն
Շիրակի մարզ	099 30-79-69	Դարմանյան Գրիշա
Չարենցավան	093 28-64-13	Հայրապետյան Գևորգ
Սպիտակ	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Սևան	093 48-76-43	Նաղարյան Արթուր
Վանաձոր	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Վանաձոր	099 88-05-50	Նազարյան Ավետիք
Վարդենիս	094 91-44-80	Նշանյան Տոլիկ
Վեդի	094 03-26-16	Աղաբեկյան Գառնիկ (Ռուբիկ)
Տաշիր	093 09-84-33	Սուքիասյան Նորիկ
Տավուշ	093 43-72-33	Օհանյան Արթուր

Շատ փոքր եմ, որ
մտածեմ Աստծու մասին

Շատ երիտասարդ եմ, որ
մտածեմ Աստծու մասին



Շատ զբաղված եմ, որ
մտածեմ Աստծու մասին

Շատ ծեր եմ, որ
մտածեմ Աստծու մասին

Շատ ուշ է, որ
մտածեմ Աստծու մասին

www.barilur.org
info@barilur.org